

Գր. Ղափանցյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ Աշխարհագրական ընկերությունը նախանցյալ տարվա վերջերը լույս ընծայեց մի աշխատություն, որ կրում է «Հայկական ՍՍՌ աշխարհագրական անուններ» վերնագիրը, տպված հայերեն և ռուսերեն: Անշուշտ ողջունելի պիտի համարել առաջին այս փորձը: Ճշտվել և փոփոխվել են մի շարք անուններ թե՛ վարչադեմոգրաֆիական (վարչական շրջաններ, բնակավայրեր, երկաթուղային կայարաններ) և թե՛ ֆիզիկո-աշխարհագրական (լեռներ, գետեր, լճեր և այլն), ընդհանուր գումարով 430 անուն, որպես այս կարգի գործի առաջին և գլխավոր մասը:

Ինչ խոսք, որ այսպիսի մի գործ պիտի պահանջեր մեծ ու մանրտիրակիտ աշխատանք մեր պատմաբանների, լեզվաբանների և աշխարհագետների կողմից, և ընդհանրապես ասած՝ այդ հաջողվել է: Շատերիս համար տարօրինակ էր թվում եկեղեցական, թյուրք-սելջուկյան մի շարք տեղանունների գործածումը մեր սովետական դարաշրջանում: Իհարկե այդ բոլոր Մուլա-Բայազետները, Մուլա-Գուրսունները... Սուլթանարանները, Սուլթանբեկները, Ուլուխանլուները, Ալիրեկլունները և նմանները վկայում են օսմանական տիրապետության դաժան լուծը և ազդեցությունը:

Գործի հետագա շարունակության և կատարելության տեսակետից մեր կարծիքով ավելի լավ էր խուսափել հապճեպությունից, որը զգալի է թվում: Որոշ շրջահայեցողություն մեր անցյալի նկատմամբ կարծես թե թերատեսված է և կամ բնավ անտեսված, երևի չիմանալու հետևանքով: Եվ այդ տեսակետից ուրախույի պիտի համարել Հայկական Աշխարհագրական ընկերության խմբագրության դիմումի վերջին խոսքերը — «Դիտողությունները և կոնկրետ առաջարկները կընդունվեն շնորհակալությունամբ և կօգտագործվեն հետագա աշխատանքներում»: Ես խմբագրության մեջ չեմ եղել, թեպետ «Նախարանում» (էջ 6) գրված է, որ անհրաժեշտ դեպքում խորհրդատվության ենք դիմել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գր. Ղափանցյանին»: Ես համենայն դեպս պատասխանատվություն չեմ կրում մի շարք թերությունների և սխալների համար, քանի որ շատ քիչ եմ մասնակցել (մեկ-երկու անգամ):

Այրուրեանական կարգով, ինչպես գրքում բերված է, կաշխատեմ իմ մի շարք դիտողությունները կամ առաջարկություններն անել:

Ինչու Ալազյազ լեռան անունը շատ ճիշտ վերականգնվում է Արագած իր նախկին ձևով, իսկ երկաթուղային կայարանի և Ապարանի շրջանի Ալագյազները մնում են հին, այսինքն նախկին ձևով (էլ չեմ խոսում, որ հեշտությամբ դա ժողովրդական ստուգարանության հետևանքով դարձնում են Ալագյոզ): Թող հայ ժողովրդի ստեղծած մեծարժեք լեգենդայի հերոսի (Արայի) անունը իր «Արայան գահ» (= Արագած) մի քանի լեռնանունների մեջ առհավետ հնչի և գրվի:

Աճբերդ անվան հետ կապվում է այն զետը, որ Քասաղի աջ վտակն է (հոսում է Արագածից), և այն լեռնագագաթը (սԱմբերդասար), որ գտնվում է Արագածի հարավային լանջին: Այստեղ ունեմ երեք գիտողություն: Նախ, ինչու է չի հիշվում Աճբերդ բերդը և ամառանոցը Վաչուտյանների (Չաքարյանների) ժամանակ, որի հոյակապ ավերակները պարսպով և ջրանցք-բաղնիքով հիմա էլ մնում են: Երկրորդ. ինչու է գրվում Ամբերդ և ոչ թե Անբերդ, ինչպես ըուր յոթ դեպքերում կարգացվում է 13—14 դարերի արձանագրությունների մեջ (տե՛ս Կ. Կոստանյանի «Վրամական տարեգիրք», էջ 275), թողած զեռ ձՈ (ան) բառը, որ խուրրիտերենում (en || an) և հայերենում (Ծովի-ան—Ծովի-նար) վերապրուկային ձևով մնացել է և նշանակել է «աստված»: Անբերդ հին ձևը վեր է ածվել Ամբերդ նոր ձևի՝ հետոնից աստիճյացյայի հետևանքով, ինչպես անրիծ > ամրիծ և այլն: Եվ երրորդ, Ամբերդ (Անբերդ) անունով գետ չի հիշվում ժողովրդի մեջ և որքան գիտեմ նաև արձանագրություններում: Այդ զետը աշտարակցիք և օշականցիք, որպես բնիկներ այդ շրջանում, կոչում են Շաղվերդ (հնչվում է Շաղվերթ), որը ըստ իս խեթական լեզվի կազմութուն ունի, անցած հայասցիների միջոցով մեզ, և նշանակում է «Մեծ Գուր», այսինքն՝ «Մեծ առու», որ իրոք այդպես է (նա գետ չէ): Չպետք է կարծել, որ այդ Շաղվերդ գետակի անունը օտար ծագում ունի, որ կարող է թվալ առերեւոյթ, ինչպես շահ (= թագավոր) և վերդի «աված», նման Խուրավերդի, Ալլահվերդի կազմութուններին: Համեմատել խեթերեն sail(i) «մեծ» և verd < vetr || vat(a) «ջուր», ինչպես ունենք հայոց Օլավերդ, Հաստիվերդ... Եղվարդ (սվերին առու), Թաղավարդ (սներքին առու) և նմանները:

Արագյուղ—գյուղ Աշտարակի շրջանում, առաջ կոչվում էր Ղարաջորան: Անվանումը կարելի է ընդունել երկու պայմանով. նախ, եթե Ալիշանի կողմից մատնանշած «գիւղն Արայի» ավելի մոտ չէր բուն Արայի լեռան (= Ծաղկեմանքին) և նրա նշանավոր քարայրին, ուր պաշտվում է սուրբ Վարվառեի հիշատակը համբարձման տոնին. ըստ իս այդ գյուղը պիտի համընկներ հետագա Դյուրդալուեի հետ (Ծաղկեմանքի հարավային ստորոտում), որին մոտ էր և Շամիրամի բլուրը: Այնպես որ եթե այդ վերջին գյուղը մնում է, պատշաճ է Արագյուղ անունը տալ այդ Դյուրդալուին և ոչ թե Ղարաջորանին: Երկրորդ արգելափակ հանգամանքը—այդ երկրորդ «Արայի գյուղ» անվան գոյութունն է Ապարանի շրջանում (նախկին Բազարջուղը), որ կարող է շփոթութուն առաջ բերել:

Արամուս գյուղի անվան կապակցությամբ, որ շատ հին է և կազմված է Արամ անունից և -աւն-ք (|| -օւն-ք) ածանցից, ես կուզենայի տարբերացման և պատմականության տեսակետից նկատի ունենալ երեք տարբեր-ուս վերջավորութունները՝ ձևավորված հին հայցական հոլովով: Նախ ունենք, օրինակ, Նորատուս, որ կեղծ ստուգաբանությամբ, այն էլ թյուրքական դուզ «հարթութուն» բառի կապակցությամբ, դառնում է «Նորագույն», Երկրորդ, նման հայցական հոլովաձևով ունենք Նոնունիս, որ դարձել է Նոնուս և այլն: Արդյոք լավ չէր լինի Արամուս, Շահպուս (> Շահրուզ շահի սառույց > կեղծ ստուգաբանությամբ) և նմանները, որ եղել են Արամօնք > Արամօնս > Արամուս, Շահպօնք > Շահպօնս > Շահպուս սկզբնաձևերով և ամենից շատ են (Արամօնք, Շահպօնք, Գագիօնք, Խրծիօնք, Արկղօնք և

այլն), գրել իրենց սկզբնական ձևով: Ես կառաջարկեի այժմյան նոր տեղանուններ, ձևավորելիս նկատի ունենալ նաև այդ -օն (հին- աւն) բառաստեղծական միջոցը:

Արթիկ տեղանունը 13-րդ դարի մի արձանագրություն մեջ գրված է Արդիկ (տև՛ս Կոստանյանի Վիճական տարեգիրք», էջ 276): Արդյոք նպատակահարմար չէր պահել այդ հին ձևը, ինչպես այժմ գրում ենք մարդ, վարդ և այլն, թեպետ հնչում ենք մարթ, վարթ և այլն: Այդ նկատառումով գրում ենք նաև Եղ(ի)վարդ, Շաղվերդ, Թաղավարդ և այլն, թեպետ ժողովուրդը հնչում է թ բաղաձայնով ըստ պատմական հնչյունափոխի օրինաչափության:

Արմազ լեռան անունը իզուր է վերածված Արամազդ պարսկական աստվածանվան ձևի: Մենք ոչ մի տվյալ դրա համար չունենք: Ձևական տեսակետից ոչ մի դժվարություն և հակապատմականություն չկա բաժանել Արմ-ազ, ինչպես ունենք Արտազ հին գավառանվան նման կազմությունը -ազ ածանցով. էլ չեմ ասում, որ Վրաստանում ևս կա Արմազի անունը: Այդ անունը Բուլտունովան ցանկանում էր հանել փոքրասիական (խեթական) arma- Վրուսին» անունից: Ածանցի համար համեմատել նաև Իարտազ տեղանունը:

Արտեհի լեռնագագաթի և ավանի անունը, որ տալիս է Ա. Շիրակացին, ըստ իս պիտի կարգալ Արտին, ինչպես որ առաջ ընդունվում էր: Այդ ձևը արդարացվում է մոտ եղած Ադին, Թալին, Արտվին և այլուր Կարին, Պաղին և նմանների կազմությամբ: Այդ -ին ածանցը ունենք ոչ միայն վերին, ստորին, խորին, մթին և նմանների մեջ, որոնք ածականներից են, այլև գոյականներից ստեղծված ամուսին, աղախին, լուսին և այլ ածանցյալների մեջ: Դրանց հարում է և Արտին անունը (համեմատել արտեան գրարարյան բառը, որ նշանակում է եզակիում Վրեոան գագաթ» իսկ հոգնակիում նաև թթարթիչ, աչքի կոպը մագերով):

Գարալի գետի անունը, որը Փամբակի աջ վտակն է (Կիրովականի շրջանում), փոխված է Տանձուտ նոր ձևով: Հարցնում եմ, ինչ կարիք կար. արդյոք Գարալի անունը օտար է կամ անբարեհունչ. դժվար թե: Վերջավորությունամբ հիշեցնում է հին հայանունները՝ Փարալի, Բարձապի և նմանները: Պետք է նման դեպքերում զգույշ լինել:

Գյուլասուր—գյուղ Վեդու շրջանում: Հնչվում է, որքան գիտեմ, նաև Գյուլասուրի: Կեղծ ստուգաբանությամբ առաջին մասը կապակցում են թյուրքական Գյուլ Վրիճ» բառի հետ, բայց դա, իհարկե, բառախաղ է: Բառը իրոք հնում եղել է Կելասուրի, որ նշանակել է Եկիրճ, լեռնային հանգույց» և կա թե՛ Հայաստանի հարավային շրջաններում (Կղեյսուր), թե՛ Վրաստանում և թե՛ մինչև իսկ հեռավոր Բալկաններում՝ Ալբանիայում: Այդ մասին առիթ եմ ունեցել այլուր գրելու:

Գնդեվազ գյուղի անունը ես գերադասելի եմ համարում գրել իրեն հին ձևով՝ Գնդեվանս, որը իրոք եղել է և ստացվել է որպես հայցական հոլոված, Գնդեվանք ուղղականի ձևից: Սա ունի այն առավելությունը, որ Գնդեվանս հին ձևը չի կապակցվի իր երկրորդ մասով «վազ» բառի հետ, կի՞նա պատմական իր կազմավորությունամբ, և այդ հայցական հոլովածով կմիանա մեծ ~~...~~ նմանաձև անուններին, ինչպես՝ Կարս, Տուրս, Կու-

րիս, Բնունիս, Նորատուս, Դոդոս և այլն: Այդպես նաև պիտի գրել Լենվանս և ոչ թե Լենվազ (Ջանգեզուրում) և ուրիշները:

Դովրի գյուղանունը Եղվարդի մոտ (Աշտարակի շրջանում) հնչվում է աշտարակցիների մոտ Դեվրի, որը ճիշտն է և հինն է: Համեմատել Դիվրիկ քաղաքանունը Տաճկահայաստանում, Արարկիբից հյուսիս-արևմուտք: Թյուրքերը հնչում էին «Դովրա-խարարոս»: Դեվրի անունը իրեն վերջին ի ձայնավորով մոտ է Կարրի, Փարպի, Ուշի, Փերսի, Բջնի և նմաններին:

Դսեռ գյուղը, Հովհաննես Թումանյանի հայրենիքը, փոխված է այդ րանաստեղծի անունով: Հատուկ տեղանունները, ինչպես Դսեղ, Աոնեղ (Նոր Բայագետի մոտ), Կնդեղ, Բնարեղ, Մամուշեղ և այլն ծագել կամ եղել են հասարակ անուններ, որոնք հայ և տեղական հին լեզուների րառագանձն են հարստացնում: Ցանկալի չէր այդ Դսեղ անունից զրկվել. Ինքը, մեր մեծանուն րանաստեղծը, դեմ կլիներ դրան, և այդ փոփոխությունը ոչինչ չի ավելացնում նրա փառքին:

Ելղովան գյուղանունը Կոտայքի շրջանում հնում եղել է Բարձապի և ցանկալի է, որ այդ անունը վերականգնվի:

Թղիթ գյուղանունը Աշտարակի շրջանում թյուրքական հնչումն է հայոց Թեղուտ անվան, որ պետք է վերականգնել: Թեղուտներ, ինչպես հայտնի է. շատ կան (Ալավերդու, Բջևանի և այլ շրջաններում) և իրենց -ուտ մասնիկով միայն բուսական աշխարհի հետ են կապված (Ծառուտ, Կաղնուտ, Շիրորուտ, Ուռուտ և այլն):

Մաղկունյաց լեռնաշղթա (Փամբակի լեռնաշղթայի միջին մասից ձգվում է դեպի հարավ-արևելք), ինչպես Վայոց ձոր և նմանները: Կարիք չկարստ իս տալու գրարարյան մեռած ձևով, այլ պետք է ասել Մաղկունքի լեռնաշղթա, Վայքի ձոր և այլն: Դրանով չի շփոթվի Մաղկունք գյուղանունների հետ:

Կոնգուր-Ալանգյազի լեռնաշղթան, որպես Ջանգեզուրի լեռնաշղթա, պետք է փնա իրեն այս հին ձևով, որը մի քիչ ազավազված է: Առաջին մասը եղել է Կանգար (Կանգուար) հին անունը, որ այլուր նույնպես հիշվում է, իսկ Ալանգյազը մեր Ալագյազն է, որպես Արագած անվան ազավազված հնչում, նման աղճատամբ ամենուրեք: Ը միջի այլոց կա Ալագյազ լեռնանուն և Խնուսի մոտ: Ջանգեզուրի արևմտյան մասի այս Ալագյազ լեռնաշղթայի անունը և Արամին նույն տեղի գյուղանունը վկայում են Արա աստծու պաշտամունքի տարածումը նաև Հայաստանի արևելյան մասերում:

Հախս գյուղանունը Աշտարակի շրջանում միանգամայն իզուր է փոխված նոր Ջորալի անվան: Այդտեղ ապրող թյուրքերը չէին կարող արասանել հին Աղց անունը (զ հնչյունը պիտի հնչեին ս-ով): Ես հաճախ եմ լսել Ախիս (АХИС) կամ Հախիս արտասանությունները այդ եկվորների րերանից, այնինչ մեր րնիկ աշտարակցիները իրենց մոտիկ այդ գյուղանունը հնչում էին (և մեծերը դեռ հնչում են) Աղց: Վերջնայես այդ պատմական վայրը հիշատակում է Մ. Խորենացին (II գիրք, գլուխ 27), երբ պարսիկները գրավում են Անին, հափշտակում նրա գանձերը և հայ թագավորների ոսկորները (Արշակ 2-րդի ժամանակ), րայց հայ նախարարները ևս ինդրեցին այդ ոսկորները և թթաղեցին յաւանին յԱղցս, որ յօտին Արագած կոչեցեալ լերինն»: Միթե հայկական աշխարհագրական անուն-

ներ կազմողները չգիտեին այս նշանավոր Աղց տեղանունը Արագածոտն գավառում և նրա մեջ եղած մի քանի արժեքավոր հուշարձանների մասին:

Ղափան գետանունը տառադարձված է Կապան ձևով, իսկ քաղաքանունը մնում է թյուրքական հնչմամբ՝ Լափան, ինչպես է ասենք հին Կարս ձևը (հայցական հոլովածն է Կար-ք ուղղականից, որ չի պահված, բայց կար Կարուց դուռն Անիում, այսինքն՝ Կարսի գուռ) և նոր թյուրքահունչ Ղարս ձևը: Հին Կապան, Կապանաբերդ և այլ ձևերը տալիս է, օրինակ՝ Ստ. Օրբելյանը: Պետք է ազատագրվել սխալ գրությունից և արտասանությունից և գրել ու հնչել Կապան:

Նագրվան գյուղանունը (Աշտարակի շրջանում, Փարպուն կից) անշուշտ եղել է Լազար(տ)վան: Աշտարակցիք հնչում են «Լազրվան» այսինքն՝ Լազար հայտնի մի մարդու հետ կապված բնակավայր կամ վանք: Կարծում են, որ այդ անձնավորությունը հայտնի Ղազար Փարպեցին է: Պետք է գրել «Լազարվան» և թողնել հին ձևը (կապակցված «Նազար» անվան հետ): Լազարվանից հյուսիս խոր ձորի ձախ եզերքին կտր Փերսի թյուրքական գյուղը, որ երևի հնչվել է հնում կամ այգպես և կամ Պերսի. դրան մոտ էր և թյուրքական Անգրսակ գյուղը, որը նույնպես հայկական ծագում ունի (հմմտ. Ան-բերդ, ան-դորգանք):

Վորդնավ կամ Որդնավ (=Վորդնավ) գյուղանունը իզուր փոխված է Ջրաշենով (Սպիտակի շրջանում): Ճիշտը, իհարկե, Որդնավ անունն է, որ նշանակում է «ճիճվոտ, червыиыѣ» երևի այդ տեղում շատ է ճիճու (որդն-ճիճու) զարգացել: -ավ մասնիկը կա և ուրիշ դեպքերում (Կճավ, Սուկավ, Պարտավ...), ինչպես և վրացերենում (Թելավ թթեղուտ), իսկ նիճու արմատից տեղանուն կազմելը շատ բնական էր. և չարժեր այդ անունը փոխել: Համեմատել, օրինակ, վրաց նիաբուրի կամ նիաուրի տեղանունը նիա ճճի» գոյականից:

Տորթնի տեղանունը Ղափանի շրջանում փոխված է Անտառաշատ: Չգիտեմ ինչն է ստիպել մեր Ակադեմիայի Աշխարհագրական հանձնաժողովին այդպես վարվել: Գուցե հասկանալիության տեսակետից, բայց դա դեռ արդարացում չէ. այն ժամանակ շատ ու շատ այժմյան տեղանուններ չպետք է լինեին, ինչպես Երևան, Օշական, Լոռի և հարյուրավոր նմանները: Գուցե հարգելի հանձնաժողովի անդամներին այդ Տորթնի անունը թվացել է հակաէսթետիկ, ինչ որ զուգորդություններ կարող է առաջ բերել երբ, օրինակ, Որնակը (Ալավերդու շրջանում) դարձրել են Ակներ, Որդնակը (Սպիտակի շրջանում) դարձրել են Ջրաշեն, և այլն: Կամ գուցե նրանց թվացել է, որ այդ Տորթնին օտար նվաճողների կամ կրոնական ինչ որ բան է, — այդ ևս պետք է մերժել: Այդ բանը տեղական է և կազմված է -նի ածանցով, որ գուցե հոգնակիի նշան է, ինչպես ունենք՝ Արզնի (=ին Արծնի), Իջնի, Պարնի, Պրտղնի, Մուղնի, Գարնի և այլն, թեպետ այդ բաների մեջ ն կարող է երբեմն և արմատական լինել (համեմատել Արծն քաղաքը Էրզերումի մոտ, որից Արզն -ար-Ռում դարձել է Արզըրում):

Ուզունլար գյուղը Ալավերդու շրջանում, որքան ևս գիտեմ հին Օձունն է, թյուրքերի կողմից ձ-ն վերածված զ-ի և ստուգարանված ուզուն «Երկար» բառով և հոգնակի -ւնը վերջամասնիկով: Պետք էր վերականգնել Օձուն:

Ուժանիս—գյուղ Հափանի շրջանում: Այստեղ ևս ունենք այլ և այլ ազդեցութիւններ: Նախ, որքան գիտեմ, այդ անունը հնչւիլիս է եղել Ուջանիս, որը թյուրքական ձևափոխածութիւն է հին հայոց Վժանիս ձևի, քանի որ թյուրքերը երկու բաղաձայնով (վժ) բառ չէին կարող սկսել,— մի երևույթ, որ մասամբ հատուկ էր և հայերենին, մանաւանդ հետագայում. և երկրորդ, թյուրքերը չունեին ժ բաղաձայնը և ընական է, որ պետք է հարմարեցնեն իրենց ազգային հնչյունական սպեցիֆիկային, փոխելով ժ-ն նոր ջ հնչյունի: Այդ տեղի է ունեցել և Արագածոտնի հին Վժան գյուղի արտասանութեան մեջ, որ այժմ հնչւում է Ուջան: Իմ կարծիքով այդ երկու դեպքերում էլ կարելի էր այժմ վերականգնել հին Վժան և Վժանիս հայկական գյուղանունները:

Փարրինջ գյուղանունը (Աշտարակի շրջան) փոխել են նոր Ոսկեհատ անվան, չգիտես թե ինչու: Բառը եղել է Փարրին կամ Պատրիճ, որ նախահայկական տեղական լեզուներում նշանակել է «քաղաքիկ», դատելով ըստ ուրարտերեն պատարի (patari) «քաղաք» բառի, թեպետ կար Հայաստանում և Pattiariց քաղաքանունը, որ հետագայում հնչւեց Պատրիճ > Փաթրինջ: «Պատար»-ը ստացաւ նաև Երևրդ» նշանակութիւնը: Ապարանում (>ին Նիգում) կար և Եղի-պատրուշ տեղանունը («Վերին քաղաք»), իսկ հին փոքր Ասիայում մի քանի անգամ պատահում է Patar, Pitar և այլ փոփոխւած ձևերով: Մենք բարոյական և պատմագիտական իրավունք չունենք հին Փաթրիճ կամ Պատրիճ օսկի բառը կորցնել և տեղը դնել Ոսկեհատ ոչ արժեքավոր բառը (թեկուզ և հասկանալի):

Փերսի գյուղանունը Աշտարակի շրջանում փոխւած է «Բուրալետ»-ի: Թե՛րևս հանձնաժողովը կարծել է, որ սա ևս օտար բառ է, քանի որ այդտեղ հայեր չէին ընկալում: Շատ հապճեպ եզրակացութիւն: Տարօրինակ է, որ Աշտարակի շրջանի մի շարք հին հայկական անուններ այսպիսի թեթև փրահատութեան են ենթարկւել: Հենց այդ Փերսից մի քիչ ցած գտնւում է Ուշի, որ նույնպես օտարաբնակ էր: Գրանցից մի քիչ դեպի արևմուտք է Փարպի գյուղը, իսկ դեպի արևելք՝ Կարրի գյուղը: Կարծում ենք, որ այս Փերսի, Ուշի, Փարպի և Կարրի անունները, որոնք մի փոքրիկ շրջանում են, պետք է արգեն վկայեն իրենց վերջին ի-ով լեզվական հին ակունքը. թեկուզ և նախահայկական: Ես արգեն վերևում նշեցի Փերսի տեղագրութիւնը (Լազարովանից հյուսիս, խոր ձորի վերին եզրին, աջից), որտեղ կան հայկական հնութիւններ: Այդտեղ է և Անգրսակ գյուղը (չեմ տեսել): Արագածոտնի շրջանի բոլոր հին անունները թյուրքերը պահել են փոքր ինչ ձևափոխութեամբ (Ուջան, Փաթրինջ, Աղց, Օրգոֆ, Ագարակ, Նազրվան, Ուշի, Փերսի, Անգրսակ և այլն):

Քասաղ—գետանունը մի դժբախտ բերմունքով սկսել են գրել ըստավերջում թ-ով, բայց իրոք հնում գրւել է դ-ով, իսկ ավելի հնում արտասանւել է Քասալ (Khasal): Թեպետ Մ. Խորենացու պատմութեան ձևադրերն ու յամանակից են Մնացեի, այնուամենայնիւ ամենուրեք դա դ-ով է գրւած: Այդպէս, նրա 2-րդ գրքում (§ 16) Վարդգեսաւանը «ի վերայ Քասաղ գետոյ» (ձեռագրերը նաև՝ Քարսահաղ, Քասղ) և մի ուրիշ տեղ (գիրք II, § 65) «ի վերայ Քասալս գետոյ (վրիպակ է, այլ ձեռագրերում՝ Քասաղ, Քասալ): Վարդգեսի մասին առասպելի մեջ ամենուրեք եղ Քասաղ գետով»: Օհաննանովանի մի արձանագրութեան մեջ, որ 1243 թվականից է,

նույնպես գրված է «գետն Քասաղ» (և ետու Անրերդու երկիրս սեպհական վիճակ սուրբ Կարապետիս ի յԱպարանուց, ընդ որ բաժունի գետն Քասաղ...» տես Գ. Կոստանյան, Վիմական տարեգիրք, էջ 86): Հովհաննես կաթողիկոսի մոտ ես ունենք թեև անհավ ջուր ի Քասաղ գետոյ» (Թիֆլիս, 1912 թ., էջ 88), որը Ծ-րդ դարի պատմիչ էր: Պետք է միշտ գրել Քասաղ և ոչ Քասախ, որից հեշտ է անցնել և Քացախ կեղծիքին, տեղի տալով այլ և այլ ֆանտազիաների, ինչպես մի Ջագեձոր անունը թյուրքական հնչմամբ դառնում է Ջագեզուր > Ջանգեզուր և սկսվում է հայի մոտ կապակցվել զանգեր տալու հետ և այլն: Ի դեպ. Շամիրան գյուղանունը Արտգածի հարավային ստորոտում պիտի գրել Շամիրամ, որ ըստ հայտնի առասպելի կապվում է Արայի հետ (Արագած և Արայի լեռը նույնն են վկայում), սպա թե ոչ շատ հեշտ է այդ Շամիրանը, որ քրդական գյուղ է, կապակցել Շամ (սևսորիք, СИРЯ) և Իրան հատուկ անունների հետ:

Օրգով—գյուղ Աշտարակի շրջանում. հնում հնչվել է Որկովի. կա նաև երկրորդ Օրգով, որ Իգդիրից դեպի հարավ էր, Մասիսի ստորոտում: Համեմատել լազար Փարպեցու մոտ (Տիֆլիս, 1904, էջ 94)—«Սորէն երէց, որ էր ի գաւառէն Այրարատու, ի գեղջէն որում անուն էր Որկովի»: Հետաքրքիր է, որ բառակազմի ու հնչյունը մնացել է իր հին հնչմամբ հետագայում եկած քրդերի մոտ: Երկու դեպքում էլ, թե Իգդիրի մոտ և թե Արագածի լանջին, վերջին հ-ն հապավված է:

Եթե ցանկալի է մի քանի ընդհանուր դիտողություններ անել, ապա ես կշեշտեմ հետևյալը:

Երևանի «Ծիծեռնակաբերդ» բարձունքը Հրազդանի աջ ափին կամ Օշական գյուղին կից նման բարձունքը գրքիս կազմողները կոչում են «Լեռնագագաթ»: Այս իմ կարծիքով սխալ է: Այդպես որ մոտենանք, Երևանի Կոնդր կամ Նորքը նույնպես պիտի կոչենք «Լեռնագագաթ», այնինչ դրանք բարձունքներ կամ կոնդեր են: Օշականի այդ «Լեռնագագաթը» տեղի ու շրջակա գյուղերի մարդիկ կոչում են «Իտի կոնդ», որն ինձ բացատրում էին որպես «դէտքի» կոնդ, այն է՝ Վահան Ամատունու, Ծ-րդ դարի այդ նշանավոր նախարարի, դէտը (застава, наблюдательный пункт), որը ինձ շատ հավանական է թվում (ժողովուրդը հնչում է Դիդիկոնդ): Այդ բլուրները կամ կոնդերը սարեր և լեռնագագաթներ դարձնելը, այն էլ հայաստանցու համար, ինձ հիշեցրեց ԾՏ տարի առաջ Վոլգա գետով իմ վերադառնալը Կովկաս, երբ նավի պաշտոնյաները ճանապարհորդներին վաղ առավոտյան զարթնեցրին, որ տեսնենք «Ժիգուլեյան սարերը» (այժմյան Կուլբիշևի մոտ): Բայց այդ սարերը մեր ըմբռնմամբ սովորական բլուրներ էին:

Աշխարհագրական անուններ կարգավորողները պետք է ունենային զգուշութուն հատկապես լեզվաբանական տեսակետից, հայ լեզվի և անցյալի ուսումնասիրության տեսակետից: Թեպետ ես շատ օրինակներ եմ վերևում բերել, բայց նշենք նաև մի քանիսը: Երբ ստեղծվում է «Կարմրուտ» տեղանունը, պետք է լավ պատկերացնել, որ բացի Արջուտ և Սալուտ անուններից մնացող բոլոր այդ -ուտ ածանցով անունները կապված են բուսական աշխարհի հետ (Ծառուտ, Կաղնուտ, Ուռուտ, Շրորուտ, Կեչուտ, Խնձորուտ, Հոնուտ, Եղեգնուտ և այլն), և հետևապես լավ կլիներ, որ այդ անունը այլ ածանցով և բառով տրվեր (Կարմրոնք, Կարմրիճ, Կարմրա-

վուն, Կարմրաշեն և այլն), Հետո ունենք Բարտազ լեռնանունը, որը ուղղված է Բարթաս ձևով: Արդյոք ճիշտ չէ առաջինը, քանի որ ունենք Արմազ, Արտազ, Ձողազ (գետ է Իջևանի շրջանում), Երրորդ, երբ հին Մարաթուս լճանունը փոխված է Մայրադուր նոր անունով, արդյոք դա պատմականորեն հավաստված է. մի գուցե այդտեղ հենց առաջինն է հինը, ի նկատի ունենալով - ուս վերջավորությունը (Արամուս, Շահպուս, Դուրուս և այլն) և մանավանդ Մարաթուք անունը Սասունում: Չորրորդ, Կոզ լեռնանունը փոխել են Կոզ ձևով, որ կարող է ճիշտ լինել, եթե պատմական փաստ կա, բայց եթե այսպիսի բան չկա, պետք էր թողնել նախկինը (համեմատել Կոզոյ հովիտ, Կոկաոիճ և նմանարմատ հին տեղանունները):

Հատկապես ինձ հետաքրքրեց և զարմացրեց Կարգավան մի անմարդարնակ գյուղի անվանելը «Փոքրավան»: Դա մի փոքրիկ բնակավայր է եղել Եղվարդից դեպի Արայի լեռը տարածության վրա, ավելի մոտ Եղվարդին: Ոչ ջուր է գալիս, ոչ տներ կան շեն, քիչ ավերակներ կան և մի եկեղեցի, շատ նման Անիի «Ամենափրկիչ» կլոր եկեղեցուն: Եղվարդից այդ տեղը կոչում են Ղարգավան, որը թերևս թյուրքարնակ է եղել և ավելի ուշ թափուր մնացել: Գյուղի անվան հին արտահայտությունը, անշուշտ, եղել է Կարկավան կամ Կարգավան, ինչպես թյուրքերի ազդեցությամբ հին Կապանը դարձել է Ղափան, Կարսը՝ Ղարս և այլն: Եկեղեցու միայն արևմտյան պատն է կանգուն, գրված բազմաթիվ նվիրարերական արձանագրություններով: Հարց է առաջ գալիս, ի՞նչ կարիք կար այդ ճանաչված տեղանունը փոխել և ի՞նչ նպատակով: Մեկ է, այդտեղ մարդ չի բնակվելու և կարիք չկա նոր անվամբ նրան ճանաչեցնել որ միանգամայն ավերորդ է, ես կասեի, և անհնարին:

Ի միջի այլոց անունների նորմավորող հանձնաժողովը շատ է սիրում նոր անուններ կազմել «լուս» արմատից (Լուսագյուղ, Լուսակերտ, Լուսածոր, Լուսաղբյուր), և օրինակ Սավարածորը դարձրել է Լուսածոր: Իսկ եթե այդ ձորը իրոք մթին է, խավար, ինչո՞ւ չպահել այդ անունը:

Լավ կլինեք Բաղարուրջը դարձնել Բաղարերդ, որ հայտնի է հնուց («Բաղարերդ ամուրն» Ստ. Օրբելյանի մոտ):

Ես կարծում եմ, որ դիտողություններն իս մեծ մասը փաստական է. պատմական և ճիշտ: Ցանկալի կլինի, որ մեր տեղանունների խնդիրը նորից շարունակվի քննվել, և եթե հնարավոր է որոշ սխալները ուղղվեն:

Ինչ խոսք, որ եղել է շտապողականություն և ոչ հանգամանալից ու կոնկրետ քննություն: